



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 17 ՆՈՅԵՄԲԵՐ, 2014

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս զիս. եւ ողորմեալս քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 47

### ԱՇԽԱՐՀԻՆ ՏԻՐՈՂ ՄԵԾ ԹԱԳԱԽՈՐԸ

Ծափ զարկէք, ժողովուրդներ բոլոր,  
աղաղակեցէք եւ ցնծութեան երգ երգեցէք Աստուծոյ:  
Որովհետեւ Տէրը, Բարձրեալը, ահարկու է.  
ամբողջ աշխարհին տիրող մեծ Թագաւորն է անիկա:  
Անիկա ժողովուրդները մեզի հնազանդեցուց, ազգերը մեզի ենթարկեց:  
Ինք ընտրեց իբրեւ ժառանգութիւն մեզի տրուած երկիրը,  
իր սիրելի ժողովուրդին պարծանքը:  
Ահա Աստուած վեր կը բարձրանայ՝  
ցնծութեան աղաղակներու ընկերակցութեամբ,  
մեր Տէրը ինք վեր կը բարձրանայ՝ փողերու կանչերուն հետ:  
Ներքող երգեցէք Աստուծոյ, ներքող երգեցէք,  
որովհետեւ Աստուած ինքն է ամբողջ աշխարհին տիրող մեծ Թագաւորը.  
Իմաստութեան երգով ներքող երգեցէք:  
Աստուած ազգերուն վրայ կը թագաւորէ՝ իր սուրբ աթոռին բազմած:  
Ժողովուրդներու իշխանները Աբրահամի Աստուծոյն շուրջ կը խմբուին,  
որովհետեւ Աստուած ինքն է որ կը տիրէ այս աշխարհի տիրողներուն:

### ՇԱՐԱԿԱՆ-ԱՐՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

### ԱՐՈԹՔ

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ է՛ն հովանի յիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ է՛ն արարածոց եւ ինձ բազմամեղիս:*



**ՕՐՈՒՄՆ ՆԻԹԸ**  
✠  
**ԵԼԻՑ ԺԲ ԳԼՈՒԽ (Շար.)**  
✠

**ԲԱՂԱՐՋԱԿԵՐԱՑ ՏՕՆԸ (12:15-20)**

Զարիկը փոնելու պատուէրը փալէ ետք, (15-20 հմր) կը ներկայացնեն բաղարջակերաց փօնը 7 օրերու վրայ փարածուած, եւ զայն կատարելու որպէս փօն: «Բաղարջներու փօնը պահեցէք, որովհետեւ նոյն օրը ձեզ Եգիպտոսի երկրէն պիտի հանեն»: Հանողը Աստուած Ինքն է: 7 օրեր բաղարջ հաց պիտի ուտեն: Իսկ ով որ խմորեալ հաց ուտէ այդ անձը պիտի կորսուի: Չըսելու համար շաք, բայց այս հրահանգը խիստ կը թուի, բայց ասով պատրաստելու համար Իր ժողովուրդը որպէսզի լրջութեամբ մօտենայ պատուէրին, որովհետեւ մարդ արարածը թուամորթ է:

**ԱՌԱՋԻՆ ԶԱՏԻԿԸ (12:21-28)**

(21-28 հմր) արդէն կը ներկայացնեն առաջին Զարիկը փօնելու հրահանգը, որ Մովսէս կը փոխանցէ իր ժողովուրդին: Հեթաբրքրականօրէն բացատրութիւնը փալէ ետք յարկանշական է հետեւեալ նախադասութիւնը. «Եթէ ձեր որդիները ձեզի ըսեն թէ ”այս փօնով ի՞նչ կ’ուզէք”, ըսէք թէ ”Ասիկա Տիրոջ զարկին գոհն է, որովհետեւ Եգիպտոսի մէջ Իսրայէլի որդիներուն փոններուն վրայէն անցաւ, երբ եգիպտացիները զարկաւ, մեր փոնները ազատեց”»: Ահաւասիկ, ոչ թէ պարզապէս փօնը փօնելու, այլ նաեւ յիշելու եւ սորվեցնելու Տիրոջ կատարածը, որպէս փրկութիւն: Նոյնը այսօր մեր պարագային երբ մենք ալ այսօր նոր զարկին է որ կը փօնենք, երբ մեզի հարցնեն ինչո՞ւ կը փօնենք, ի՞նչ պարասխան ունինք փալիք:

**ԱՆՂՐԱՆԻԿՆԵՐՈՒ ՄԱՀԸ (12:29-36)**

(29-36 հմր) այս հատուածը կը ներկայացնէ անդրանիկներուն մահը: Հարուած մը, որուն հետեւանքով Փարաօնը ալ կ’արքօնէ որ իսրայէլացիները դուրս գան Եգիպտոսէն, ինչպէս արդէն նախապէս զգուշացուցած էր Տէրը Մովսէսին: Եւ ոչ միայն Փարաօնը այլ ամբողջ Եգիպտոսի ժողովուրդը, անոնց փալով արծաթն ու ոսկին, միայն թէ դուրս գան Եգիպտոսէն: Այս հատուածը մէկ կողմէ Աստուծոյ դատաստանն էր Եգիպտոսի ժողովուրդին համար, միւս կողմէ, առիթ փրկութեան:

**ԻՍՐԱՅԷԼԱՑԻՔ ԵԳԻՊՏՈՍԷՆ ԿԸ ՀԵՌԱՆԱՆ (12:37-42)**

(37-42 հմր) այս բաժինը կը ներկայացնէ Եգիպտոսէն ելլը: Հեթաբրքրական հաշուելու եղանակ մը ունին, ուր միայն կարծէք կը հաշուուին այր մարդիկը, որոնք թիւով 600000 էին, չհաշուած կիներն ու երեխաները: Ոչ թէ որովհետեւ անոնք կարելոր չէին, այլ շատուելու եղանակ մըն է, ինչպէս որ է պարագան Նոր Կրակարանի 5000ի կամ 4000ի կերակրումի պարագան: Որովհետեւ անոնք շաք ժամանակ չունին փոխաւոր, անոր համար ալ անխմոր շօթեր եփեցին:

**ԶԱՏԻԿԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆԸ (12:43-51)**

(43-51 հմր) կը ներկայացնեն դարձեալ զարիկը ուտելու հրահանգը, բայց այս անգամ կարծէք յաւելեալ մանրամասնութիւններով. «Բնաւ օտարական մը անկէ պիտի չուտէ, բայց ամէն մարդու ստակով ծախու առած ծառան, թլփատուելէ ետք կրնայ ուտել»: Ահաւասիկ պատուէր մըն է, որուն կը զգուշացնէ Տէրը թէ ովքեր կրնան ուտել այդ զարիկը, պէտք է որ թլփատուած ըլլալ: Այս պարագային թլփատութիւնը Աստուծոյ ժողովուրդին մաս կազմելու նշան էր:

Ահաւասիկ Եբրայեցիներուն համար ասիկա փրկութեան փօնն էր, բայց նաեւ պարմական յիշարակ մըն էր, իրենց Եգիպտոսէն ելլելուն եւ առանձին ազգ մը ըլլալուն թուականն էր: Այս փօնը նաեւ յաւիտենական փօն մը պիտի ըլլայ, որուն շարունակութիւնը իր նոր իմաստովը Քրիստոս պիտի փոխանցէր իր աշակերտներուն: